№ 84 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 23 1894 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 23 № 84

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ահա մեր պահանջը. Առաջադիմութեան ալիքները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մրցանակաբաշխութիւն թէ ծաղրանութիւն. Սովեանների օգտին. «Պաշտօնեիների» գործերը. Նամակ Ղարայից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կաթոլիկ հայերը. Եզուիտների գործունէութիւնը Հայաստանում. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐԱՍ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ԱՀԱ ՄԵՐ ՊԱՀԱՆՋԸ

Մենք բողոքում ենք կամայականութեան դէմ, և ոչ թէ այս կամ այն անձնաւորութեան դէմ:

Մենք պահանջում ենք յարգել կանոնադրութիւնը, և ոչ թէ այս կամ այն անձնաւորութիւնը:

Մեզ համար մի և նոյն է, թէ ով է կամայականութիւն գործողը,—մի բարձր հոգևորական, մի հասարակ քահանայ, մի տեսուչ, մի հոգաբարձու, թէ մի այլ բարձրաղիր պաշտօնեայ:

Մեզ համար ոչինչ նշանակութիւն չունի, թէ արդեօք կամայականութիւն գործողը, դիսցիպլինան խանգարողը մեր կողմակիցն է, մեզ համակրողը, թէ մեր հակառակորդը, մեր թշնամի բանակի մարդ,—մենք կը հալածենք բոլորին անխնայ, առանց խտրութեան:

Մենք չենք թագցնի, և հրապարակով կը պաշտպանենք նոյն իսկ մեր հակառակորդին, եթէ նա հանդէս է գալիս իբրև կամայականութեան թշնամի, իբրև ժողովուրդի ընտրողական իրաւունքների յարգող, իբրև արդարութեան պաշտպան:

Մենք պահանջում ենք, որ բարձր իշխանութիւնը թոյլ չը տայ, որպէս զի այս և այն պաշտօնեան, ով և լինի նա, ինչ դիրք և ունենայ նա, խախտի օրէնքը, կարգը, ժողովրդի իրաւունքը, կամ հիմնարկութեան կանոնադրութիւնը:

Եթէ չէք հաւանում գոյութիւն ունեցող կանոնադրութիւնը, եթէ չէք ուզում որ, դիցուք, մի առաջնորդի իրաւունքների առաջ որ և է սահման լինի, և կամ մի որ և է հոգաբարձութեան ձեռքում որ և է իրաւունք,—այն ժամանակ փոխեցէք այդ տեսակ կանոնադրութիւնը, յայտնեցէք, որ առաջնորդը անսահման տէր է, հոգաբարձութիւնը զրօ, և ժողովուրդը զրկված իր ընտրողական իրաւունքներից: Բայց քանի որ այդ չէ արված, քանի որ կայ որոշ կանոնադրութիւն, որոշ կարգ, որոշ իրաւունքներ և պարտաւորութիւններ, մենք պահանջում ենք, որ ամենից առաջ ինքը պաշտօնեան, ինքը իշխանութեան ներկայացուցիչը յարգի օրէնքը, յարգի կանոնադրութիւնը, և թոյլ չը տայ իրան՝ կամայականութիւն, բռնութիւն, անտեղի ճնշում:

Իշխանութեան ոյժը՝ կամայականութեան մէջ չէ, այլ գոյութիւն ունեցող կանոնադրութեան և օրէնքների ձիշդ, անշեղ պահպանութեան մէջ:

Իշխանաւորի ոյժը՝ կամայականութիւնը չէ, և ոչ էլ սոսր կողմնապահութիւն, այլ այն անկողմնապահ, անկաշառ, արդար ոգին, որով նա վերաբերվում է ամենքին, առանց խտրութեան, որով նա գործադրում է օրէնքները, առանց աչառութեան:

Երբ պաշտօնեան կամայականութիւն է գործում, նրան պէտք է պատժել. երբ առաջնորդը խախտում է գոյութիւն ունեցող կանոնադրութիւնները, նրան պէտք է սանձահարել. երբ մի որ և է ստորադրեալ ոտի տակ է տալիս դիսցիպլինայի տարրական պահանջները, նրան պէտք է հեռացնել. երբ իշխանաւորը, հակառակ կանոնի և արդարութեան, ճնշում է գործ դնում, հալածում է, բռնութիւն է թոյլ տալիս, նրան պէտք է յանցաւոր ճանաչել:

Եւ այլն և այլն և այլն:

Կրկնում ենք. մեզ չեն հետաքրքրում անձնաւորութիւնները. մեզ հետաքրքրում է սկզբունքը, արդարութեան գաղափարը, իրաւունքի խնդիրը:

Պէտք է պաշտպանել արդարութեան գաղափարը, պէտք է բարձր պահել սկզբունքը,—ահա թէ ինչ ենք ուզում մենք:

Պէտք է սանձահարել կամայականութիւնը, պէտք է հալածել կամայականութիւն գործողներին,—ահա թէ ինչ ենք պահանջում մենք:

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ԱԼԻՔՆԵՐԸ

Մեր հասարակական զարգացման ներկայ բոպէն հետաքրքրական է մանաւանդ այն պատճառով, որ այդ զարգացումը չէ կղզիացել մի քանի կէտերում, այլ շարունակում է տարածել իր ալիքները մեծ շրջանում, դէպի գաւառի զանազան մասերը: Առաջադիմական մտքի և նրան պաշտպան առաջադիմական բանակի զարգացումը գաւառներում կատարվում է նոյն բարոյական ուժով, ինչպէս Թիֆլիսում, խորտակելով տմարդի զրպարտութիւնները, չար բամբասանքները, կամայականութիւնը, և յաղթական կերպով առաջ տանելով այն գաղափարները, որոնք ղեկավարում են և ոգևորում ամբողջ բանակը:

Առաջադիմութեան հակառակ ոյժերը գաւառներում փորձում են նոյն արգելքները առաջ բերել, ինչ որ մի քանի անգամ արդէն գործադրել են Թիֆլիսում: Մաքեր խառնափնթորելու նոյն փորձերը, նոյն բանսարկութիւնները, նոյն խարդախ ձեւակերպութիւնները այնտեղ կուտակվում են՝ առաջադիմական գործին արգելք հանդիսանալու. բայց շնորհիւ իրանց բարոյական սնանկութեան, դատապարտված են անկման և վերջնական խորտակման:

Միթէ՞ բաւական չէին մեր խաւարամիտների համար այն փորձերը, որ եղան Թիֆլիսում: Ամեն միջոց նրանք գործ դրեցին հասարակութեան միտքը պղտորելու, և վերջի վերջոյ ոչինչ չը կարողացան առաջացնել, բացի այն, որ իսպառ մերկացրին իրանց բարոյական կատարեալ սնանկութիւնը: Նրանք ամեն օր հեքեաթներ էին հնարում մարդկանց մասին, չը մտածելով, որ մի օր վերջապէս կը բռնվեն և արժանաւորապէս կը պատժվեն: Դժուար էր ստուգել զրպարտութիւնները, երբ սրբանք վերաբերում էին մի խումբ մարդկանց, մի առանձին հիմնարկութեան, մի սահմանափակ շրջանի: Բայց երբ բանսարկու ոգին իր զրպարտութիւնները տարածեց մեծ շրջանի վրա, երբ նա անպատկառ և անամօթ համարձակութեամբ հեքիաթներ հնարեց ժողովրդի մասին, այն ժամանակ հասարակութեան համար հեշտացաւ այդ զրպարտութիւնները ստուգելու միջոցը: Այն ժողովուրդը, որ անմեղ և սուրբ զգացմունքով ձեռք էր առել քուէն այս կամ այն անձին տալու, յայտարարվեց հարբեցող, կաշառված: Այն ժողովուրդը, որ տարիների ընթացքում անընդհատ յարաբերութիւններ էր ունեցել իր ծխատէր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, յուլիսի 12-ին

Յունիսի 28-ի աղետի՝ երկրաշարժի պատճառած վնասները ընդհանուր են հայու, յոյնի, Թուրքի և հրէայի համար, բայց հայոց վնասը շատ ու շատ ծանր ու աւելի է, միւս ազգութիւններու համեմատութեամբ:

Պոլսոյ մէջ երկրաշարժը սոսկալի աւերումներ գործեց Սամաթիա, ուր ամբողջապէս դրեթէ հայեր են, մեծաւ մասամբ արհեստաւորներ, մանր վաճառականներ, օրը օրին վաստկող—ապրող գործաւորներ, թւով մօտ 900 ընտանիք, որոցմէ կէսն աւելի այսօր դառն աղքատ, աւուր հացի կարօտ, անտուն, տուներնին քարուքանդ եղած, բացօդեայ քուրչերու ծածկոյթներու տակ ապաստանած են: Պղտիկ հով մը կընայ առնել տանել, պղտիկ անձրև մը երկու վայրկեանի մէջ վրանի տակը կը թրջէ և լճակներ կը կազմէ: Եթէ այդ դժբաղդ, անտէր, անօգնական, թշուառ հարիւրաւոր ընտանիքները միխիթարութիւն մը, սփոփանք մը ունին այս ընդհանուր աղետի ժամանակ, այդ ալ նորէն բնութեանը կը պարտին, որ կարծես դթալով, կարեկցելով իրենց, ոչ սաստիկ քամի կընէ, ոչ ալ անձրև. եթէ ցերը մի արասցէ, առանկ դժբաղդութիւն մը, նոր անդթութիւն մը ալ անէ բնութիւնը, ասոնց կը մնայ ծովը թափուիլ, պրծնիլ:

Սամաթիայէն ետքը կուգան Գում-Գաբու, Կէտիք-փաշա և Գալաթ թաղերը, որոնք միւս թաղերու համեմատութեամբ աւելի են վնասված: Այս թաղերու բնակիչներու աղքատներու վիճակն ալ գրեթէ նոյն է, ինչ որ սամաթացիներունն: Սամաթա և Կէտիք-փաշա տուներու մեծ մասը փլած են, միւսները կամ կիսափուլ, ճաթած ու խարխլած, անբնակ են եղած: Կէտիք-փաշա նոյնպէս մեծաւ մասամբ հայաբնակ է, բայց սամաթիացիներու համեմատութեամբ քիչ մը աւելի ապահով. ասոնց աղքատները համեմատաբար քիչ են: Գում-Գաբու և Գալաթ 10 տունէն 1-ը անվնաս է մնացեր, իսկ մնացեալները կամ փլած են, կամ կիսափուլ և կամ խարխլած, ճաթած, մի խօսքով անբնակելի են:

Ըսուած է, թէ մարդէն աւելի անգութ գազան չը կայ. այս խօսքը այս անգամ ևս արդարացուցին պօլսեցիները: Պոլսոյ այն գիւղերը, ուր երկրաշարժը ոչինչ վնաս չէր հասուցած, կարծես ուրախացած այս ընդհանուր աղետէն, ջանացին ըստ կարելւոյն աւելի շահել և տուներու վարձը եռապատկեցին, առանց վայրկեան մը խղճահարելու, առանց մազի չափ դթալու, ամենաանխիղճ կերպով սկսան շահագործել, օգտուելով արկածեալներու վիճակէն, մտածելով, թէ ուզեն պիտի տուներնին վարձեն, դուրսը մնալու չեն: Եւ այս ցաւալի, յուզիչ երևոյթը ընդհանուր էր: Մի տուն, որ արժէ 15—20 ոսկի, երկրաշարժէն ետքը ոչ թէ 20—45 ոսկի, այլ 60 ոսկի ալ կուտան: Եւ մարդիկ ստիպված են այդ գումարը տալ, որովհետև ապրելու տեղ չը կայ:

Սամաթիոյ, Գում-Գաբուի, Կէտիք-փաշայի և Գալատի հայ աղքատներու թիւը հաղար ընտանիքէն աւելի է, որոնք այսօր ամեն բանէ զրկված, աւուր հացի կարօտ են և նկարագրած վերանանման ծածկոյթներու տակը բացօդեայ կապրին: Հայերէն ետքը կուգան Թուրքերը, յետոյ յոյները և հրէաները, որոնք արդէն թէ փոքրաթիւ են և թէ համեմատաբար քիչ են վնասված:

Այս թաղերու մէջ, բարեբաղդաբար, կեանքի կորուստ շատ քիչ է եղեր, ընդամենը 7—8 հոգի, որոցմէ 4-ը Սամաթիա, իսկ միւսները մէկ-մէկ անձն միւս թաղերու մէջ: Իսկ վիրաւորուածները բաւական շատ են ամեն հասակի և սեռի:

Որքան կեանքի կորուստը աննշան, քիչ է յիշեալ թաղերու մէջ, այնքան մեծ և սոսկալի է կեանքի, մարդու կորուստը Շուկայի մէջ: Պօլսի մեծ շուկան արդէն շատոց ի վեր մեծ համբաւ ունէր և ամենուրեք յայտնի: Մեծ շուկան գրեթէ մէկ ամբողջ առևտրական քաղաք է: Այդտեղ խանութներու թիւը 6000-էն աւելի է, ունի իր մէջ մինչև 25 խան, 4—5 մզկիթ, 7—8 բաղնիք, 10—12 աղբիւր:

Յունիսի 28-ի սոսկալի երկրաշարժը պատահեց ճիշդ ժամ 12-ին, այսինքն օրվայ այն ատենը, երբ շուկան լեփ լեցուն էր ահագին բազմութիւնով: Երկրաշարժի ցնցումները զգացուցին պէս երկնաղղորդ վայնասունով կը սկսին փախչիլ, ձգելով խանութները, գործերնին և իրար կոխկրտելով ամեն ոք ընկերը, դրացը, հարստութիւնը՝ ամեն ինչ մոռցած՝ կը փութայ իր անձը, իր հոգին ազատել: Շուկայի մէջ այդ ատեն տեղի ունեցած աղմուկը, չփոթութիւնը, իրարանցումը, անբնակայելի էր: Կառավարութիւնը շուկայի դռները գոցել տուաւ և պահապաններ նշանակեց, որ գողութիւններ չը լլան, որովհետև բոլորը՝ իրենց խանութները բաց ձգած ու փախած էին: Երեք օրէն ետքը բացին շուկայի դուռները և կառավարութեան կողմէ քննութիւն մը կատարուեցաւ: Շուկայի վնասը ևս ահագին է. մանաւանդ վնասված են ոսկերիչները, որոնք, չը հաշուած 4—5 խանութները, մնացեալը հայ են:

Երկրաշարժէն 4—5 օր ետքը շուկան սկսաւ հոտել. ատոր վրա կառավարութիւնը սկսաւ փորուածքներ անել՝ դիակները հանելու համար: Յարդ 1000-էն աւելի դիակ հանուած է. կառավարութիւնը զոհերու ստոյգ թիւը կը ծածկէ. լրագիրներուն ալ վերջերս արգելուեցաւ այդ մասին գրել: Չը նայելով յարդ հանուած դիակներուն, շուկան կը շարունակէ հոտել, որ ըսել է թէ, շուկան կը շարունակէ տակը չը հանուած դիակներ կան: Աղէտի ժամանակ շուկայի մէջ տեղի ունեցած բազմաթիւ դէպքերէն մէկ երկուք յիշել աւելորդ չենք համարեր: 3 զինուոր և մէկ թուրք սպայ և քանի մը հոգի մեռած կը գտնվին, որոց գրպանները, ծոցերը լեցուն են եղեր ոսկիներով, ակնեղէններով և թանկագին իրեղէններով: Թուրք հանրամ մը հայ երիտասարդի մը հետ մեռած կը գտնուի: Հայ գրավաճառ մը 7 օրէն ետքը կենդանի կը հանուի փլատակներու տակէն: Երբ կը հարցուի, թէ ինչպէս եօթ օր անօթի կենդանի մնացեր է, կը պատասխանէ՝ «կարագուլպի» ջուր կը խմէի (Պոլսոյ գոված ջուրն է): Եւ հաղար նըմանօրինակ դէպքեր:

Շուկան այժմ աւերակ է: Կատարելապէս աւերակ են և յիշած չորս թաղերը, որոնք գերեզմանոցի տպաւորութիւն կընեն իրենց անմարդաբնակ տուներով, փողոցներով և գերեզմանական լռութեամբ:

Երկրաշարժէն բազմաթիւ ամպածրար մինարէներ կործանուեցան, մզկիթներ ու եկեղեցիներ ճաքեցան և 20—25 խան քանդուեցան: Կործանված ու խարխլած են բազմաթիւ հանրային շէնքեր, ի միջի այլոց Բ. Դուռը, արդարադատութեան նախարարի պաշտօնատունը ու ոստիկանութեան պալատը, հանրային կրթութեան պաշտօնատունը, հեռագրատունը, մաքսատունը. մեր և յունաց հիւանդանոցները ևս մեծապէս վնասուած են. երկու հիւանդանոցներու հիւանդները փոխադրուած են պարտէզները, վրաններու տակ:

Մոռցանք ըսել, որ վնասուած ու փլած են կեդրոնական և ուրիշ բանտեր: Անտարակոյս բազմաթիւ բանտարկեալներ բանտերու փլատակներու տակ մնացած են, բայց կառավարութիւնը հերքելու համար տարածուած լուրը, պաշտօնապէս յայտարարեց, թէ բանտերը վնասուած չեն: Այդ և նման պաշտօնական յայտարարութիւններ կրնան արդիւնք մը ունենալ գուցէ դուրսերը, բայց հոս ոչ ոք չը հաւատաց, որովհետև ստոյգ յայտնի է, որ բանտերը թէ փլած են, թէ բազմաթիւ մարդիկ մնացած են փլատակներու տակ:

Պոլսոյ կրած վնասը մինչև հինգ միլիոն ոսկի կը հաշուեն:

Խ.—րով

քահանայի հետ, զրկվում էր իր ընտրողական իրաւունքից, անարդար պատճառաբանութիւններով։

Եւ ժողովուրդը հասկացաւ, թէ ինչ է կատարվում նրա շուրջը։ Նա բացեց աչքերը և մերկացնելով խարդախութիւնը, թոյլ չը տուեց, որ շարունակեն նրա հետ կատակներ անել։

Նոյնը կատարվում է և կը կատարվի գաւառներում։ Այնտեղ ևս ժողովուրդը սկսել է դիմակաւորներին ճանաչել և շուտով կը պատժի նրանց արժանաւորապէս։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ Է ԹԷ ԾԱՂՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

—

Մօտ տասն տարի առաջ մեծ աղմուկով և յոյսերով հաստատվեց Իզմիրեան մրցանակը.— պատրիարքարանին յանձնվեց այդ գործը, իբր ազգային մի մեծ (?) գործ, յանձնաժողով կազմվեց, ծրագիրներ մշակվեցին, Պոլսի լրագիրները վարդագոյն երազներ տեսան... և այդ բոլորից յետոյ, դեռ մի քանի տարի միայն անցած, մենք տեսնում ենք, թէ ինչպէս մրցանակաբաշխութեան անուան տակ՝ ծաղրաբանութիւն է կատարվում։

Դեռ սկզբում գործին մասնակից անձինք մի փոքր բարեխղճաբար էին վերաբերվում, դեռ սկզբում մրցանակի էին ներկայանում այնպիսի գրողներ և հեղինակներ, որոնց անունը մի փոքր գրական էր. բայց մի քանի տարի անցնելուց յետոյ, քննադատները այնպիսի անբարեխիղճ քայլեր արեցին, որ այժմ այլ ևս ոչ մի իր պատիւը հակացող գրող կամ աշխատող իր աշխատութիւնը չի ներկայացնի Իզմիրեան մրցանակին։ Եւ գիտէք ինչու. որովհետև ոչ մի պատուաւոր գրող կամ հեղինակ չի ցանկանայ, որ իր գրուածքի վրա քննադատ լինի մի տգէտ վարդապետ, մի անուս եպիսկոպոս, կամ մի վարձկան պօլսեցի գրչակ, որը կամ ոչինչ չէ հասկանում իր քննադատութեան ենթարկված գրքից, և կամ եթէ հասկանում է, կողմնապահութիւն է անում, խաթր է պահում, և քննադատի բարձր դիրքից իջնելով, սկսում է մտածել, թէ ով է գրքի գրողը, կամ ինչ կերպ չահի սրա կամ նրա սիրտը։

Եւ միայն անյատակ տգիտութեամբ, և կամ անսանձ կողմնապահութեամբ կարելի է բացատրել այն տխուր երևոյթը, որ վերջին տարիներս Իզմիրեան մրցանակին արժանացան այնպիսի աշխատութիւններ, որոնք միայն ծիծաղ կարող էին շարժել,—կամ մի ուսանողի խակ կօմպիլացիան, կամ մի քահանայի այնպիսի աշխատութիւնը, որի ճակատին կարելի է միայն պլագիատ բառը դրոշմել, և կամ այնպիսի երեխայական թոթովանքներ, ինչպէս են այն գրուածքներից մի քանիսը, որոնք արժանացել են փոքրիկ մրցանակների այս տարի։

Ահա էլի մի փաստ.—այս տարի, ի միջի այլոց, մրցանակին են ներկայացվել երկու գործ. «Պատմութիւն հայ լրագրութեան», աշխատութիւն Գրիգորիս վարդապետ Գալէմքարեանի (Մխիթարեան միաբան) և «Հայոց պարբերական մամուլը», որի աշխատասիրողն է մի բոլորովին անյայտ պարոն, ումն Գարեգին Լեոնեան, որը, ինչպէս իմացանք Կ. Պոլսի լրագիրներից, Աէքսանդրոպոլ է ապրում։ Երկու գրքերի քննողը եղել է պօլսեցի ծերունի գրականագէտ Կ. Խիթիւճեան։

Եւ ահա անարժան գտնելով Գալէմքարեանի աշխատութիւնը, նոյն Խիթիւճեանը 20 ոսկի մրցանակի արժանի է գտել ումն Գարեգին Լեոնեանի աշխատութիւնը, մի մարդ, որի գոյութեան մասին Կովկասում առաջին անգամն է լսվում։

Եթէ Խիթիւճեան էֆէնդին անարժան է գտել յայտնի Գալէմքարեանի աշխատութիւնը, այդ ինչպէս է պատահել, որ արժանաւոր է գտել անյայտ, գուցէ հաղիւ գրագէտ մէկի աշխատութիւնը...

Դա իսմ մի ստեղծագործութիւն, կամ մի նըկարագրութիւն չէ, որի համար բաւական լինի ընածին տաղանդ. պատմութիւն գրելու համար հարկաւոր է պատրաստութիւն, ուսում...

Մեզ յայտնի չեն մանրամասնութիւնները, բայց գրազ կը գանք, որ այդտեղ դեր է խաղացել կամ կողմնապահութիւնը, կամ այն աններելի անփոյթութիւնը, որի շնորհիւ Իզմիրեան մրցանակին արժանանում են ամենայիմար գրուածքներ, բոլորովին խայտառակելով այդ մրցանակի անունը։

Եւ ճշմարիտ, վերջին տարիներս Իզմիրեան մրցանակի անունը բոլորովին վայր ընկաւ, շնորհիւ քննադատողների ընդունած գրքերի։

Մենք կարծում ենք, որ Իզմիրեան մրցանակի նպատակը չէ մի տասն ոսկի սրան տալ, մի քսան ոսկի միւսին՝ իբրև ողորմութիւն, այլ մրցանակի նպատակն է՝ խրախուսել գրողներին, խթան լինել յայտնի ճիւղի մէջ նոր հետազօտութիւններ և լուրջ ուսումնասիրութիւններ անելու։

Եթէ ուզում էք, որ այդպիսի ծիծաղելի դէպքեր չը կրկնվեն, և մրցանակի անունը բոլորովին ցեխի մէջ չընկնի, կազմեցէք հմուտ անձինքներից յատուկ յանձնաժողով, որի հաւաքական կարծիքը լինի այս կամ այն գրքի բաղդը որոշողը, և ոչ թէ այս կամ այն տգէտ վարդապետի, կամ տգէտ էֆէնդիի անձնական կարծիքը, որը կամ մարմնացած տգիտութիւն է լինում, կամ աներես կողմնապահութիւն...

Ապա թէ ոչ Իզմիրեան մրցանակաբաշխութեան համակրելի միտքը կը դառնայ վերին աստիճանի անհամակրելի մի ծաղրաբանութիւն, ինչպէս արդէն մասամբ դարձել է։

*

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք Թիւրքաց Հայաստանի, Երևանի ու Կարսի Նահանգների սովեալների օգտին.

1) Աստրախանից, Կարապետ Արզումանեանցի միջոցով, 74 ռուբլի, հանգանակած մի խումբ պարոններից, վեհափառին ուղարկելու համար։

2) Բալախանից, Միքայել Յակոբեանի միջոցով 23 ռուբլի, որը հանգանակած է Ն. Կրասիլնիկեանի նաւթահանքի ծառայողների և բանուորների մէջ։

3) Եյսկից, վաճառական Սէթ Գ. Խօջայեանից 17 ռուբլի։

Ուրեմն նախկին 779 ռուբլի 53 կոպէկի հետ, այժմ ունենք ընդամենը 893 ռուբլի 53 կոպէկ։

Այսօր, յուլիսի 23-ին, ուղարկեցինք.

1) Կարս, Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղին 100 ռուբլի, գաղթականներին հայրենիք վերադարձնելու համար։

Բացի դրանից տուեցինք՝ 1) Մուշի վիճակի Բուլանըք գաւառի Կոփ գիւղացի Յարութիւն քահանայ Տէր-Յարութիւնեանին, որ Թիֆլիս էր եկել և օգնութիւն էր խնդրում, 15 ռուբլի, յորդորելով հայրենիք վերադառնալ. 2) Էրզրումցի Կարապետ Դարբինեանին, որ Թիֆլիսում օգնութիւն է հաւաքում, 5 ռուբլի, յորդորելով Էրզրում վերադառնալ։ Այդ նպաստը տրված է ծանօթ մարդկանց երաշխաւորութեամբ։

Ուրեմն մեզ մօտ մնում է 773 ռ. 53 կ։

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 7939 ռ. 35 կ.։

Ուղարկել ենք 7166 ռուբլի։

«ՊԱՉՕՏՆԻԿՆԵՐԻ» ԳՈՐԾԵՐԸ

—

Տարիների ընթացքում մեր մամուլը արդարացի բողոքել է մեր գիւղական ժողովուրդը կեղեքող զանազան աղաների ու ինքնակոչ փաստաբաններ քստմնելի գործունէութեան դէմ։ Սակայն այդ բողոքները մինչև այժմ ցանկալի հետևանքները չեն ունեցել և մեր ողորմելի գիւղացին այժմ էլ շարունակում է տառապել իր նախկին թշուառ կացութեան մէջ։ Լրագրական խօսքը մուտք չէ գործում գիւղ. գիւղում ուսուցիչ չը կայ, եղած դէպքումն էլ նա անօգնական է, նրա գործունէութեան ասպարէզը, տարաբաղդաբար, դեռ շատ նեղ է։ Քահանաները չեն կանգնած իրանց կոչման բարձրութեան վրա, այդպիսով չը կայ գիւղում այն տարրը, որը պէտք է հաղորդիչ լինէր և մամուլի մէջ արծարծած մտքերը գիւղական ժողովրդի մէջ մտցնէր։ Ցեցերը շարունակում են ծծել գիւղացու արիւնը։ Խրաքանչիւր տարի ծընունդ են առնում նոր տեսակի, նոր տիպի ցեցեր, և դրանց թիւը դնալով բազմանում է։

Առաջ այդ թիւը կազմում էին գիւանատներից ու դատարաններից արտաքսված զանազան ստոր պաշտօնեաներ, դրագիրներ, թարգմաններ, որոնք մտնելով գիւղը, սկսում էին գիւղացուն «զակօն» սովորեցնել ու «նրա աչքը բաց անել»։ Անցան տարիներ, գիւղացու «աչքը բացվեց», նա իմացաւ՝ աշխարհքումս ինչ կայ, ինչ չը կայ, ու ինքը, կեղեքվածը, սկսեց կեղեքողի դեր կատարել, աւելի անխիղճ, աւելի անզուսպ կեղեքողի, քան էին նրա նախկին դաստիարակողները։ Այժմ գիւղացիները իրանք են իրար միս ուտում. ցեցը ծնունդ է առնում իրանց՝ գիւղացիների միջից, զօրեղը ճնշում է անզօրին, հարուստը աղքատին, սէր ու համերաշխութիւն բոլորովին չը կայ։

Տրեխաւոր ցեցերը այլ ևս չեն կոչվում «իշխան», նրանք կրում են «պաչօտնիկ» փառաւոր տիտղոսը, որը, իբրև նոր ու օտար, ափլի է աղդում մասսայի երևակայութեան վրա։ Իւրաքանչիւր գիւղում դոյութիւն ունի «պաչօտնիկների» մի որոշ խումբ, որը գործում է նախանձելի համերաշխութեամբ. դրանք արտաքինով նոյն գիւղացիներն են, նոյն տրեխաւորներն են, միայն բարոյապէս այլանդակված տրեխաւորներ։ «Պաչօտնիկները» մի տեսակ բռնակալ իշխաններ են. նրանց ձեռքի տակ են գտնվում գիւղական բոլոր պաչօտնեաները՝ սկսած տօնուտէրից մինչև գզիրը, թէև նրանցից ոչ մինը որ և է առանձին պաչտօն չէ վարում, պաչտօնական դիրք չէ բռնում։ Բոլոր համայնական ու նշանաւոր մասնաւոր գործերը, զանազան պաչտօնեաների ընտրութիւնները անցնում են «պաչօտնիկների» ձեռքով, մասսան միայն հա ու չէ-ի իրաւունք ունի. այդ հա ու չէ-ն էլ նա կարող է ասել, նայած «պաչօտնիկի» բարեհաճութեան։ Սեփական նախաձեռնութիւն ու կարծիք մասսան չունի. այդ ինչ նրա գործն է, երբ գիւղի պետերը նրա «դարդը քաշում են»։

«Պաչօտնիկները» տարվայ մեծ մասը գիւղում պարապ չը ջնում են։ Գաւառական կամ նահանգական ատեաններից մի որ և է պաչտօնեայի գալը նրանց համար կատարեալ տօնախմբութիւն է. այդ մի առիթ է հասարակութեան հաշվով քէֆ անելու. պաչտօնեան մի մահանա է, որից օգտվելով, «պաչօտնիկը» մի քանի օր ձրի ուտում—խմում է, հաշիւը բարձում գիւղացու վզին և բացի այդ, դեռ իր օրավարձն էլ առնում համայնական գումարներից։

Համայնական հաշուեմատեաններում սովորական բաներ են այսպիսի հաշիւները. «Նաչալնիկի (գաւառապետի) օգնականը ու պրիստաւը եկան գիւղ, յուլիսի 12-ին, մնացին երկու օր, երկու գիշեր, ծախսեցինք ընդամենը 30 մանէթ. մեր աղէքն էին, պատիւ տուինք»։ Այն ինչ «աղէքը» հաղիւ թէ, գիւղերում տիրող էժանութիւնն աչքի առած, այդ 30 ռուբլուց մի 4—5 ռ. ծախս կըցած լինեն գիւղացիներին. մնացածը անհետանում է չնորհիւ «պաչօտնիկների» երկու—երեք օրվայ կեր ու խումի։ Տարվայ ընթացքում պատահում են այդպիսի տասնեակ դէպքեր, ու համայնական առանց այն էլ ծանր բիւդժետը ևս աւելի ծանրանում ու անտանելի է դառնում գիւղացիների համար։ Համայնական հարկերը, որոնք միմեանց վրա կուտակվում են, չնորհիւ «պաչօտնիկների» ու դրանց հպատակ գիւղական պաչտօնեաների անփոյթութեան ու բացարձակ անբարեխղճութեան, խեղդում ու քիչ-քիչ չքաւորութեան են մատնում գիւղական ամբոխին։ Համայնական հարկերի վրա կողմնակի կենտրոյ չը կայ, կանոնաւոր հաշուեմատեանները նոյնպէս բացակայ են. «պաչօտնիկը» գիւղական դրագրին ասում է. «աղա, գրի», և նա գրում է. նրա ու իրան թելադրողի ինչ գործն է, թէ ում գրպանը պէտք է պատասխանատուութեան ենթարկվի։ «Պաչօտնիկը» միշտ գանգատվում է, որ ինքն ամենից թշուառն է. սովորական բան է նրանից լսել. «ես ում ծառան եմ. մեծաւոր է գալիս, բանից—գործից ընկնում եմ, հասարակութեան բերան եմ դառնում ու աղի հետ խօսում. բա դեռ մի փոր հաց էլ չուտեմ, հասարակութիւնից իմ օրավարձը չառնեմ։ Աղէն վրաս բարկանում է, մի-երկու անգամ մարակով խփում է, կամ ապտակ է տալիս. ես սուս եմ կենում, ասում եմ մեր աղէն ա, բան չը կայ, եթէ այդ բանը յօգուտ հասարակաց ա, թող ինչքան ուզում ա նի պրանի, տայ, սպանի ինձ, միայն թէ մեր հասարակութեան գործը առաջ տանի։ Բա դուք էլ գիտէք, թէ այս պաչօտնիկութիւնն էլ մի բան ա. ճար չը կայ, պաչօտնիկ ենք դառել, յօգուտ հասարակութեան չարչարվում ենք, թուք ու մուր ենք կրում մեր երեսին, որ մեր հասարակութիւնը լաւ կառավարվի, որ մեզ մի ժամանակ ողորմի տան»։

Պատահում է համոզել «պաչօտնիկին», որ նա բարեխղճութեամբ գործի ու չը կեղեքի ժողովրդին. նա առանց քաշվելու պատասխանում է՝ «լաւ, շատ լաւ, քանի դուք այստեղ էք, չիտակ կը կենանք. բա երբ որ գնաք, էլ գիւղի տէրը մենք չենք։ Դուք որ կաք արևաթոռ (արևի ժամանակ տեղացող անձրև) էք, այսօր կաք չենում, վաղը ոչ. գնաք թէ չէ, էլ մենք մեր ուզածը կանենք. եթէ հիմա մի ոչխար կամ ուլենք ուտում հասարակութեան հաշուով, ձեր գնալուց ետը տասը կուտենք. եթէ հիմա մի վեղրա գինի ենք խմում, այն ժամանակ տասնհինգը կը խմենք։ Ձեր ձեռքը ինչ է գալիս. շատ շատ կաղէթումը կը գրէք, դրանից մեզ ինչ վնաս. կաղէթ գրողը մեծաւոր ա, նա կարող ա մեզ պատժել»։

Ահա «պաչօտնիկի» լոգիկան. նա ճանաչում է միայն «մեծաւորին», նրա հեղինակութիւնը ու նրան ուղեկցող եասաւուլի ձեռքի մտրակը. դուս ինտելիգենտը նրա համար ոչինչ։ Ուրեմն ով պէտք է սանձահարի այդ «պաչօտնիկների» ինքնակար տարրը։

Ս. Տ. Ա.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

—

Յուլիսի 13-ին

Վերջերումս Բաղուի կօմմէրսանտները սկսել են առանձին ուշադրութիւն դարձնել Ղուբայի գաւառի վրա։ Դրան ապացոյց կարող է լինել այն, որ նոյներումս մի պարոն՝ Կոլուբով, գնել է Ղուբայի գաւառում, գեներալ Բակիխանովից, նրա «Աղալուղ» կոչված գիւղը, 62 հազար ռուբլով։ Ձայն կայ, որ Կոլուբովի քոյրը մտադրութիւն ունի գնել մի այլ գիւղ «Վէլեամիր» անունով, Ղուբայի գաւառում։ Անկասկած գնողները կը շահվեն, քանի որ այստեղի հողը բերրի է և բնութիւնը հրաշալի։

Մեր գաւառը հարուստ է և արտադրում է մեծ քանակութեամբ ամեն տեսակ պտղեղէն, ցորենի լաւ տեսակ և այլն. իսկ ինչ վերաբերում է գորգերի արդիւնաբերութեանը, կարող ենք առանց չափազանցութեան ասել, որ Ղուբայի գորգերը իրանց անտիկ տեսակով և նուրբ գործուածքով յայտնի են դարձել ամեն տեղ և ուշադրութիւն գրաւել։ Մեծ քանակութեամբ արտահանվում է նոյն իսկ Եւրոպա։

Ամառվայ ամիսներին Ղուբան ամարանոց է հռամարվում բաղուցիների համար։ Մի քանի տարի է ամառը գալիս, մնում են մի քանի վարչութիւններ, ինչպէս օրինակ՝ Բաղուի նահանգապետի դիւանատունը, նահանգապետի հետ միասին, և նրա հովանաւորութեան ներքոյ գտնված այլ վարչութիւններ, Բաղուի իգական ինստիտուտը և այլն և այլն։ Առանց դժուարութեան Ղուբան կարող էր մեծ ամարանոց դառնալ և մեր քաղաքը անհամեմատ շատերը կը դայլն, եթէ մի հանգամանք նկատի առնվէր.—Ղուբան տներ չունի, հոյակապ շինութիւններ չէ պարունակում իր մէջ. շատ է զգացվում այդ պակասութիւնը։ Ցանկալի է, որ Բաղուի դրամատէրերը այստեղ իրանց ծախսով կառուցանէին տներ, որոնք անհամեմատ աւելի էժան կը նստեն, քան Բաղուի դաւառում, օրինակ Մաշտաղոց, Բզովնա և այլն։ Վերջիններումս տները փակ և դատարկ կը մնան ձմեռ ժամանակ, մինչդեռ այստեղի տները ոչ մի ժամանակ դատարկ չեն մնայ և այդպիսով այն մի քանի տարում ստացած քրէհը կը ծածկէ ամբողջ ծախսը... Հարկաւոր է աւելացնել, որ քաղաքը ամարանոց եկողների համար մեծ յարմարութիւններ ունի. այստեղ կան բժիշկներ, դեղատուն, վաճառատներ։

Նոյն իսկ կառավարութիւնը կարող էր մի քանի սեփական շինութիւններ կառուցանել զանազան վարչութիւնների համար այնպէս, ինչպէս որ է Դարաչիչագը՝ Երևանի համար, Հաջի Քէնդ՝ Գանձակի համար, նոյնը կարող է լինել Ղուբան՝ Բաղուի համար։

Ունենք մենք մեծ դրամատէրեր և արդիւնագործներ, Դէբուրներ, Բակիխանովներ, Կոլուբովներ, Սարումովներ, Գանձակի նահանգապետ Նակաշիձէ, Բաղուի նախկին նահանգապետ Կոլիբակինի ժառանգները, և ուրիշները, որոնք մեր գաւառում անազին կալուածքներ ունեն և մեծ շահեր են ստանում,—ահա դրանք կարող էին սեփական շինութիւններ կառուցանել, որպէս զի յարմարութիւններ լինեն, և Բաղուից սկսեն այստեղ ամարանոց գալը, որը մեծ շահ կը տայ տեղացի բնակիչներին։

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ալէքսանդրօպոլ, յուլիսի 14-ին

Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան Ալէքսանդրօպոլի ճիւղի ձրի-էժանագին ճաշարանը կառավարող մասնախումբը խնդրում է «Մշակի» մօտակայ համարներից մէկում տպագրել հետեւեալը։

Ճաշարանի հիմնարկութեան օրից—յունվարի 24-ից մինչև փակման օրը—ապրիլի 22-ը մասնախումբը ստացել է վարչութիւնից գործադրելու 1441 ռուբլի 86 կոպ., որից 1217 ռ. 38 կ. ժապաւինեալ մատեանով, որի մէջն է նաև «Մշակի» միջոցով Բագուի գործակատարների ուղարկած 38 ռուբլին, իսկ մնացած 224 ռ. 48 կ. յարգելի խմբագրութեանդ ուղարկած դումարներից։ (Ժապաւինեալ մատեանում աչքի ընկնող դումարը, 300 ռուբլին, նուիրել է Գրիգոր Դրամբեանը՝ ի յիշատակ իր հանգուցեալ հօր)։ Ծախած բաժիններից մուտք է եղել 173 ռ. 1 կ., ուրեմն ընդհանուր մուտք է եղել 1614 ռ. 87 կ.։

Այդ գումարից ճաշարանի վրա ծախսված է 1583 ռ. 91 կ. հետեւեալ կերպով. 808 ռ. 87 կ. հացի, 550 ռ. 74 կ. կերակրի և 224 ռ. 30 կ. ճաշարանի շինութեան, վառելիքի, լուսաւորութեան և ծառաների։

Ճաշարանի բացման օրից մինչև ապրիլի 22-ը ձրիաբար կերակուր են ստացել 8689 ընտանիք, 49,262 հոգի. դուրս գնացած բաժինների թիւն էր 27,285։ Ծախած բաժիններից ստացվում էր միջին թւով 1 ռ. 97 կ. ճաշարանի վրա ծախս էր լինում 17 ռ. 99 կ. օգտվում էին բացառապէս տեղացիները միջին թւով 99 ընտանիք, 559 հոգի, միջին հաշուով դուրս էր գնում 310 բաժին։

Այս հաշուի մէջ չեն մտել մթերքներով եղած նուէրները, որ յաճախ կրկնվում էր մինչև փետրվարի 6-ը, երբ ճաշարանը բացված էր իբրև փորձ։ Թէ հասարակութիւնը համակրանքով էր վերաբերվում դէպի այդ հաստատութիւնը, երևում է նրա արած նուիրատուութիւններից և գործակցութիւնից, որ ցոյց տուեց ճաշարանի գոյութեան ընթացքում։ Սկզբներում, երբ օգնութեան մեծ կարիք էր զգացվում, ամեն ոք աշխատում էր որ և է բանով նպաստել նրա գոյութեան. պլիտայի շինութեան նիւթը, աշխատաւոր ձեռքերը, վառելափայտը և հարկաւոր իրերը տեղացիների սրտաբուղխ նուէրներն էին, իսկ երբ ճաշարանը հաստատուն հիմքերի վրա դրվեց, դրամով նպաստողը դարձեալ տեղացի հասարակութիւնն էր. մի խօսքով հասարակութիւնը իր ուսերի վրա տանում էր այդ հաստատութիւնը։ Ինչպէս ամեն գործ, նոյնպէս և ճաշարանը ունեցաւ իր թերութիւնները, բայց մասնախմբի անդամուհիների և անդամների բարեխիղճ և եռանդուն գործունէութեան շնորհիւ այդ թերութիւնները չնչին էին։ Շնորհակալութեան արժանի է հասարակութեան այդ վերաբերմունքը։

Մասնախմբի նախագահ՝ Ց. Խաչվանքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ուրբաթ, յուլիսի 22-ին, Թագուհու Կայսրուհու անուանակոչութեան տօնի օրը, բոլոր դաւանութիւնների եկեղեցիներում գոհացողական մաղթանքներ կատարվեցին, երկար կեանք մաղթելով Թագաւոր Կայսրին, Թագուհու Կայսրուհուն, Թագաժառանգ Ցեսարեվիչին և Կայսերական ամբողջ տանը։

—

Երէկ, յուլիսի 22-ին, Թագուհու Կայսրուհու անուանակոչութեան տօնի օրը, քաղաքը զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառութիւն կար։

—

«Մշակի» յաջորդ 85-րդ համարը, Վարդավառի տօնի պատճառով, երեքշաբթի օր, յուլիսի 26-ին, լոյս չի տեսնի, այլ լոյս կը տեսնի հինգշաբթի, յուլիսի 28-ին։

—

Մենք հաղորդեցինք, որ Էջմիածնից, արտաքին գործերի մինիստրութեան միջոցով, փոխադրված է Էրզրում 5,000 ռուբլի, սովեալ ժողովրդին բաժանելու համար։ Լսում ենք, որ այդ գումարը մինչև այժմ էլ չէ բաժանված և ամբողջապէս մնում է չը գործադրված։ Էրզրումի առաջնորդ Շիշմանեան եպիսկոպոսը, դիմելով Էրզրումի վալիին, խնդրել է յայտնել, թէ կարելի՞ է արդեօք այդ փողը բաժանել, թէ ոչ։ Վալին պատասխանել է, որ իր իրաւունքից բարձր է այդ մասին որ և է հրաման տալ, այլ պէտք է դիմել Կ. Պոլսի բարձր իշխանութեան և սպասել նրա կարգադրութեան։ Արդեօք դիմել է վալին Կ. Պոլիս, թէ ոչ, մեզ յայտնի չէ։ Մեզ յայտնի է միայն այն, որ Կ. Պոլսից մինչև այժմ ոչինչ կարգադրութիւն չէ եղել, և Էրզրում ուղարկված 5,000 ռուբլին մնում է չը գործադրված։

—

Ստացանք Լոզանից մի ֆրանսերէն գիրք հետեւեալ վերնագրով. «Հայկական ընտանիք և ամուսնութեան մասին էանօգրաֆիական և իրաւաբանական տեսութիւն»։ Գրքի հեղինակն է Յակոբ Մեղաւորեան. գիրքը ներկայացված է համալսարանի իրաւաբանական ֆակուլտետին՝ դոկտորութեան աստիճան ստանալու համար։ Գրքի նիւթն է հայկական ընտանիքի և ամուսնութեան օրէնքները հին ժամանակ և այժմ, այդ օրէնքների էվոլիւցիան, և այդ օրէնքների վրա եղած հռոմէական ազդեցութիւնը և այլն։ Առաջին մասում հեղինակը խօսում է հայոց նահապետական ընտանիքի և հայ ժողովրդի մէջ եղած «մայրական» սովորութիւնների մասին։ Երկրորդ մասում խօսվում է բաւական ամփոփ կերպով ամուսնական օրէնքների և ապահարզանի մասին։

—

Մենք արդէն հաղորդեցինք, որ Կարսի թիւրքաց հիւպատոսը անցագրեր չէ տալիս, որպէս զի գաղթականները վերադառնան իրանց հայրենիքը։ Հիւպատոսը, ինչպէս ինքն է ասում, սպասում է Էրզրումի վալիի կարգադրութեան։ Մեզ զարմացնում է թիւրքաց կառավարութեան այդ վարմունքը։ Տարվայ ամենայարմար եղանակն է, երբ մերկ գաղթականները կարող են առանց նեղութիւնների իրանց տեղերը վերադառնալ, և ինքը թիւրքաց կառավարութիւնը փոխանակ իր հպատակներին դիւրութիւններ տալու, որ նրանք իրանց տեղերը գնան, ընդհակառակը, իր կողմից արգելքներ է դնում։ Մինչև երբ պէտք է այդ ժողովուրդը ցիր ու ցան մնայ։ Եթէ էլի մի երկու ամիս անցնի, կը գան աշնան ամիսները, եղանակը կը փոխվի և հաղարաւոր ընտանիքներ էլի նորից կը մնան ցրտի մէջ, սովի ծանրութեան տակ։ Միթէ այս պարզ ճշմարտութիւնը անկարող են ըմբռնել Էրզրումի վալին և իր հիւպատոսները։

—

Յուլիսի 20-ին, չորեքշաբթի, հրաւիրվեցան քաղաքային վարչութեան տան մէջ դումայի կողմից ընտրված թաղական սանիտարական հոգաբարձուները, որոնք և պէտք է սկսեն իրանց գործունէութիւնը օգոստոսի 1-ից։ Ահա նրանց ցուցակը. Վէրայի թաղի սանիտարական հոգաբարձուներ են ընտրված՝ իշխան Ա. Մ. Արղուտինսկի—Դոլգորուկի և Ֆ. Մակարակի. Մթածմինդա թաղի—Գ. Սիրենկո և Ն. Խոսրօեվ. Ալէքսանդրեան թաղի—Ի. Բուդդանով և Ա. Շահազիզով. Սօլօլակ թաղի—իշխան Ն. Արղուտինսկի—Դոլգորուկով և Ն. Թամամշէվ. Բաղարնի թաղի—Ն. Կուսիկով և Գ. Ծերէթէլի. Խարփուխ-Օրթաճալեան թաղի—Ա. Բաղդասարեանց և Լ. Տիգրանեանց. Հալաբարի—Ա. Տէր-Գրիգորեանց և իշխան Ն. Թումանով. Սաղի—Ն. Ագապիով և Ա. Խրիսանֆով. Կուկիայի—Կ. Բուակեվիչ և Պ. Նակիմով. Դիդուբէյի—Ա. Բաբով և Գ. Ստեփանով։

—

Բժշկապետ Ց. Գասպարեանցի նուիրած 10 օրինակ «Մշակի» մնացած երկու օրինակն էլ որոշեցինք ուղարկել Շուշու թեմի հետեւեալ երկու տեղերը. 1) Թաղլար գիւղի հայոց դպրոցին և 2) Ներքին Թաղավարդու Մեսրոպեան դպրոցին։

—

«Тифлис. Листокъ» լրագրին հաղորդում են, որ Ալէքսանդր Զիթօղցեվ, որին Թիֆլիսի դատաստանական պալատը դատապարտեց աքսորին Սիբիր, զրկելով բոլոր իրաւունքներից, ներումն է շնորհված, փոխարինելով նրա պատիժը մի տարի բանտարկութեամբ։

—

Պատրիարքական տեղապահի ընտրութեան համար Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են հետեւեալը։ «Կրօնական և քաղաքական ժողովներու անդամները հրաւիրուած էին երէկ Պատրիարքարան տեղապահի ընտրութիւն կատարելու։ Ներկայ գտնուեցան Պատրիարքական փոխանորդ Գաբրիէլ Վ. Ճէվահիրճեան և կրօնական ժողովի անդամներէն՝ Գարեգին Վ. Թաթարեան, Արիստակէս քահանայ Ճիզմէճեան, Գաբրիէլ քահ. Խորէնեան, Յովհաննէս քահ. Շահպազեան։ Իսկ քաղաքական ժողովի անդամներէն ներկայ էին, դեր-ատենապետ Տիգրան Եուսուֆեան, Միհրան Սէթեան, Մկրտիչ Ասասեան, Յովհաննէս Թորոսեան։ Ներկայ եղողները սպասեցին մինչև ժամը 7½ և մեկնեցան յայտարարելով, թէ օրինական թիւ չունին տեղապահի ընտրութեան ձեռնարկելու համար»։

—

Օդէսայի լրագիրները հաղորդում են, որ արդարադատութեան մինիստրը Օդէսա կերթայ՝ «Վլադիմիր» չոգենաւի խորտակման վերաբերեալ գործի քննութեան ներկայ լինելու համար։

—

Քութայիսի նահանգապետը, ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, միջնորդում է ուր հարկն է, Բաթումում իգական գիմնազիա և արական պրոգիմնազիա բանալու մասին։ Բացի դրանից Քութայիսի նահանգում մտադրութիւն կայ բանալ արհեստագիտական երկու դպրոցներ։ Այդ դպրոցներից մէկը պէտք է բացվի Քութայիս քաղաքում։

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Օրիորդաց դպրոցի երկու հոգաբարձուներից մէկը. բժիշկ Խ. Բահաթրեան, հրաժարվեց իր պաշտօնից, անհնարին համարելով գործ տեսնել այն կարգերի ու սովորութիւնների մէջ, որոնք տիրում են այդ դպրոցում։ Ով ճանաչում է բժշկին, գիտէ թէ որքան անաչառ, ազնիւ մարդ է նա, որ շատ գործերի մէջ արտայայտել է բարի ցանկութիւն գործել օրիորդաց դպրոցի օգտին, նա շատ լաւ կը հասկանայ, թէ ինչ պէտք է լինեն այդ կարգերը, որոնցից փախչում է բժիշկը։ Պէտք է յիշեցնել, որ պ. Բահաթրեանի պաշտօնակից միւս հոգաբարձուն է երևելի մանկավարժ Իւան Անդրէիչ Քալանթարով»։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Անցեալ տարվայ նոյեմբեր ամսին այստեղի գործակատարները, հաշուապահ Մ. Եաղուբեանի նախաձեռնութեամբ, խնդրամատոյց էին եղել պ. նահանգապետին՝ ազատել իրանց կիրակվայ և տօն օրերի առևտուրից։ Նորին պայծառափայլութիւնը բարեհաճել էր յարգել գործակատարների խնդիրը՝ կարգադրելով փակել տալ խանութները մինչև ժամը 11-ը։ Անցել են այդ օրից ամբողջ ամիսներ, սակայն այդ կարգադրութիւնը մինչև օրս ճշդութեամբ չէ կատարվում, տեղական ոստիկանութեան թուլութեան պատճառով»։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Այս օրերս հոգևոր իշխանութեան հրամանով եկաւ այստեղ Նոր-Նախիջևանի փոխանորդ Մխիթար վարդապետը, այստեղի փոքրաթիւ հայ հասարակութեան մէջ ծագած տարաձայնութիւնները քննելու համար։ Այդ անբաւականութիւնների գլխաւոր պատճառն է Գարեգին քահանայ Բաղդասարեանը, որը սրանից չորս տարի առաջ ձեռնադրված է Աստրախանի թեմի նախկին առաջնորդ Սուրէնեանց Գէորգ եպիսկոպոսի ձեռքով, բոլորովին հակառակ ինչպէս Եկատերինօդարի, նոյնպէս և գիւղաքաղաք հայ ժողովրդի ցանկութեան։ Ցոյս ունենք, որ վարդապետը լուրջ ուշադրութեամբ կը քննէ ժողովրդեան արդարացի բողոքները և միանգամ ընդ միշտ վերջ կը տայ բոլոր տարաձայնութիւններին, որոնք այս վերջին չորս տարվայ ընթացքում մեծ պառակտումն են դցել մեր ժողովրդի մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈԼԻԿ ՀԱՅԵՐԸ

—

«Լեվանթ Հերալտ» լրագիրը հաղորդում է հետեւեալը. «Իզմիրի կուսակալութեան մէջ գտնուած հռոմէադաւան հայերը մինչև հիմա կը գտնուէին Իզմիրի լատին արքեպիսկոպոսին հոգևորական իրաւասութեան ներքև։ Աղարեան Պատրիարքը հոն կը ներկայացուցէր փոխանորդով մը որ հռոմէական հայ հասարակութեան միմիայն քաղաքային խնդիրները կը նայէր։ Հռոմի պապը, ի նկատի առնելով Պոլսոյ հռոմէական հայ Պատրիարքարանին այս մասին մատուցած խնդրագիրը, իր 10 յուլիսի վճռովը Իզմիրի լատին արքեպիսկոպոսին հոգևորական իրաւասութեան տակէն հանելով, հռոմէական հայոց Պատրիարքարանի իրաւասութեան ենթարկեց մշտապէս։ Տ. Աղարեան Պատրիարքը, այս վճռին համեմատ կոնդակ մը գրեց ուղղեալ սոյն կուսակալութեան հռոմէական հայերուն, որոնց համար ալ կարգեց երկու վարդապետ, մին Իզմիր, միւսը Այտին։

Հռոմ՝ Աղարեան Պատրիարքին իրաւասութեան ենթարկեց նաև Պարսկաստանի հռոմէականներն, որոնց վրայ հոգևոր իշխանութիւնը պիտի պատկանի այսուհետև Պոլսոյ հռոմէական Հայ Պատրիարքարանին։»

ԵԶՈՒԻՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Թիւրքաց-Հայաստանում գործող եզուիտ հոգեւորականների մասին «Հայրենիք» լրագրում կարդում ենք հետեւեալը.

«Այս վերջի տարիներս գաւառներու մէջ հաստատուող ճիզուիթ վարդապետներուն՝ քոլերան առիթ մը եղաւ ժողովրդասիրութիւն և աղքատասիրութիւն ցուցնելով իրենք զիրենք սիրցնելու։ Թոդաթէն կը գրեն թէ երբ քոլերան հոն հասաւ, ճիզուիթ միաբանութեան վարդապետները ցրուեցան քաղաքին ամեն կողմերը դեղ ու գրաւոր հրահանգներ ցրուելու հիւանդութեան դէմ։ Այսքանով չը բաւականացան, սկսան յետոյ իբր բժիշկ մտնել ամեն տուն, գիշեր ցորեկ միշտ պատրաստ օգնութեան երթալու ուր որ կուզուէին։ Վարդապետներուն միացան մայրապետներն ալ, և այցելեցին տուները։ Բնական էր որ ժողովրդին ամեն խաւերն ալ երախտագիտութեան զգացում մը ունենան, որքան որ ալ շատ լաւ կըմբռնենք թէ կրօնական նպատակով, հոգի վաստակելու համար էին բոլոր այս զոհողութիւնը։ Թոքաթի հայերը ճիզուիթներուն այս ընթացքը բաղդատեցին մեր քահանաներուն ընթացքին հետ, որոնցմէ և ոչ մին կրցաւ ապացոյց մը տալ թէ ինքն ալ կը հասկանայ ժամանակին պահանջը։ Ոչ մին և ոչ իսկ այցելութիւն մը ըրաւ հիւանդ ընտանիքի մը։ Ճիզուիթները նոյն մեթոտն ի գործ դրին ի Սըվազ՝ ժողովրդին սիրելի ըլլալու համար։ Նոյն իսկ կրօնականին մէջ ճշմարիտ է սա խօսքը. «Սիրէ որ մենք ալ քեզ սիրենք»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Արտասահմանեան լրագիրների թղթակիցները Կ. Պոլսից հաղորդում են, որ երկրաշարժի պատճառով 5-ից մինչև 6 հազար ընտանիքներ զրկվեցին իրանց ունեցածից։ Բացի դրանից, աւելի քան հազար մարդ կատարելապէս չեն անանկացել, բայց մեծ վնասներ են կրել։ Քանդված տներ և խանութների տէրերը, հոգևորականութիւնը և վնաս կրած ուրիշ անձինք արդէն պաշարում են հասարակական աշխատանքների մինիստրին՝ օգնութիւն խնդրելով նրանից։

—Գերմանական լրագիրները հաղորդում են, որ յուլիսի 14-ին (26-ին) Կէնիգսբէրգում, պրուսական Հէնրիխ իշխանի ներկայութեամբ, սկսվեց այնտեղի համալսարանի 350-ամեայ յոբելեանի տօնախմբութիւնը։ Իշխանը կարդաց կայսրի շնորհաւորական նամակը, որի մէջ ասված էր, ի միջի այլոց, թէ Կէնիգսբէրգի համալսարանը իր հիմնվելու օրից երբէք չէ մոռացել իր կոչումը՝ լինել արևելեան սահմանի վրա գերմանական կըրթութեան, գերմանական ոգու և գերմանական քաղաքակրթութեան օջախ։

—Փաստաբան Պոդրէյէր, որին հրաւիրել է Կազերիօն Իտալիայից, դիտաւորութիւն ունի ապացուցանել դատարանում, թէ Կազերիօն հիւանդ է ընկնոտութեամբ և նա, որպէս հարբեցողների սերունդ, իսկապէս խելագար է։

—«Ind Belge» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ ալբանցիների մի աւազակային խումբ յարձակում գործեց չէրնօգրցիների վրա և մտաւ Վրանիա, սահմանի մօտ, ուր կողոպտեց ուղղափառ եկեղեցին։ Բ. Դուռը պաշտօնական արեց Սկուտարիի վալիին նրա համար, որ նա չը կարողացաւ ալբանցիների յարձակումների առաջն առնել։ Սկուտարի ուղարկված է Օսման փաշան՝ ալբանցիներին ճնշելու համար։

—Պրագայում այս օրերս,—աւստրիական լրագիրների խօսքերով,—մի քանի անարխիստներ են կալանաւորված, որոնք պայթող նիւթեր էին պատրաստում։ Գտնված են նոյնպէս շատ անարխիական բրոշիւրներ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի։ Վաղը Ֆինանսների մինիստրի օգնական Իվաշչենկով ճանապարհ է ընկնում դէպի Օդէսա, Նովոռոսիսկ, Բաքու, Բաթում և Թիֆլիս՝ քննելու համար մաքսատները, կաղէտնայա պալատները և պետական բանկի բաժինները։

ԼՕՆԴՈՆ, 21 յուլիսի։ Եպիսկոպական կառավարութիւնը տեղեկացրեց օտար պետութիւնների ներկայացուցիչներին, որ Եպիսկոպիայի և Զինաստանի մէջ պատերազմ է սկսված։

ԺԻՄՕՆԻ, 21 յուլիսի։ Այսօր ազատամիտ և արմատական օրգանները յայտարարում են, որ Սերբիայի և Աւստրիայի մէջ դոյութիւն ունի զինուորական պայմանագիր, որի ժամանակամիջոցը լրանում է օգոստոսին։ Պայմանագիրը ստորագրել է 12 տարի առաջ այն ժամանակվայ արտաքին գործերի նախկին մինիստր Միատովիչ։ Աւստրիան Միլանի հետ աշխատում են երկարացնել այդ պայմանագրի ժամանակամիջոցը էլի 12 տարով։ Դիմադրական մամուլը պատրաստվում է եռանդուն կերպով կռուել այդ պայմանագրի դէմ։ Պայմանագրի ժամանակամիջոցի երկարացնելն է համարվում մայիսի 9-ի յեղափոխութեան պատճառը։ Ազատամիտները և արմատականները պայմանագրի կապելը դաւաճանութիւն են անուանում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի։ Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնայի պսակադրութիւնը Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչի հետ նշանակված է Պետերհոֆեան Մեծ պալատում յուլիսի 25-ին։ Նոյն օրն երեկոյեան հանդիսաւոր ճաշ կը լինի և երաժշտական ժողով. ապա ճանապարհ կընկնեն Բարձր Նորապսակները՝ ժամանակաւորապէս Բօպշա մնալու համար։ Յուլիսի 28-ին Բարձր Նորապսակները չնորհաւորութիւններ կընդունեն Ձմեռային պալատում, իսկ երեկոյեան տեղի կունենայ հանդիսաւոր ներկայացում Պետերհոֆեան Թատրոնում։—Փետրվարի 15-ին 1895 թ-ի Պետերբուրգում կը բացվի տպագրական գործի համառուսական ցուցահանդէս։

ԼՕՆԴՈՆ, 21 յուլիսի։ Մեծ-Բրիտանական կառավարութիւնը անյապաղ կը յայտարարի, որ ինքն չէզոք կը մնայ կօրէյական հարցում և անհրաժեշտ միջոցներ ձեռք կառնի իր շահերը պաշտպանելու համար։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յուլիսի 21-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	10 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	45 ր.	62½ »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	92½ »
Ոսկի — — արժէ . .	7 »	46 »
Մաքսային կուպոններ — . .	149 »	25 »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկոնտ — . .	5 »	7 »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . . .	159 »	— »
4½ ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	240 »	— »
— — — 2-րդ —	225 »	25 »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ. —	— »	— »
— — երկրորդ —	— »	— »
Պետական երկաթուղային բէնտա.	101 »	25 »
4½ բէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	95⅝ »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — — .	— »	— »
4½% վկայակ. դիւղ. հող. բանկի.	93 »	25 »
4½% գրաւական թղթեր կալուած.		
Պետրոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	152 »	50 »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	101 »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	— »
Օդէսայի — —	101⅜ »	— »
Թիֆլիսի — —	99 »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	100 »	— »
— — Ռոստովի — .	100 »	25 »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է
և շուտով լոյս կը տեսնէ
ԼՈՒՄԱՑԻ
„ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ“
վերնագրով վէպը։
(№ 84) 1—3

ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆԻՑ ԵԿԱԾ
ԿԱՀԱԳՈՐԾ-ԱՏԱՂՋԱԳՈՐԾ
վարպետ (ստօլիար) գործ է պատուում։ Համաձայն է առանձին պատէրով և օրական բանել. պատրաստ է կարկատել և ոչորկել։ Ընդունում է ամեն տեսակ պատէրներ, և երաշխաւորում է, որ պատէրները ամենայն ճշդութեամբ կը կատարվեն, շատ չափաւոր գներով։ Պատրաստ է և քաղաքից դուրս գնալ։ Հասցէն. Малая-Водовозная ул. տուն № 8. 1—1

Ս. Խաչ վանքի ժառանգաւորաց դպրոցի համար հարկաւոր է ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ։ Պայմանների մասին դիմել վանքի վանահօրը, հետևեալ հասցէով։ Настоятелю армянскаго Монастыря. Нахичевань на Дону.
3—3 (№ 82) Եփրեմ վարդապետ

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
Յանկանում է որ և է դպրոցում ձեռագործի և կար ու ձևի դասեր ունենալ։ Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատանը։
(№ 81) 3—4

ԱՄԵՆԱՑՍՑՑՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ։ ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՂԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՂԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ
ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Тифлисъ, Музыкальное депо Б. М. Мириманіана, Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(№ 35) 9—20

Խնդրվում է հայ հեղինակներին, թարգմանիչներին և առհասարակ ցանկացողներին, որ բարեհաճեն իրանց հեղինակութիւններից, թարգմանութիւններից և ունեցած գրքերից մի-մի կամ մի քանի օրինակ նուիրել ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ,
ցանկացողները պէտք է ուղարկեն այս հասցէով. M-r N. Karapetian, 439, P. O. Rox. WORCESTER, MASS, E. U. d'AMERIQUE. 10—10

ՍՈՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական գիտութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նազարեանայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովիանոզների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
№ 62 15—32

Ազգիս վեհափառ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական դպրոցներում, որպէս ձեռնարկ, իմ աշխատասիրած
„ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ“։
Յայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի մեզ այս հասցէով. ԹԻՖԼԻՍ, Ելիզաւետեան փողոց, տուն № 45։
Գիրքը կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յիսուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճարել 40 կ.։ Ճանապարհածախսը գնողների վրա է։
3—25 (№ 81 Սարգիս քահանայ Բէջնազարեանց

Թաւրիզի „ԱՐԱՄԵԱՆ„ ԵՒ „Ս. ԱՆՆԱՑԻ„ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր են մի հմուտ հայ ուսուցիչ, որը պիտի վարէ նոյն դպրոցների տեսչական պաշտօնը, այլ և շաբաթական 16 դաս. զաղղիական լեզուն պիտի աւանդէ միայն Արամեան դպրոցում։ Պայմանների համար խնդրվում է դիմել Թիֆլիսում պ. Ա. Մելիք-Ազարեանցին և պ. Խոսրով Արզումանեանցին։
(№ 79) 6—8

!Զգուշացէք կեղծումներից!
Հիդիէնական
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ
պրոֆիլաքտիկ։
Ոչնչացնում է երեսի դեղին բծեր, մաքրում է արևից այրվածը, ոչնչացնում է պղուկներ և քրտինք։ Առաջարկվում է որպէս առաւելագոյն անուշահոտ սապոն բարձր տեսակի։ Ոսկի մեդալ՝ 1893 թ.
Գինը կտորի համար 50 կոպ., ½ կտոր՝ 30 կ.։ Ծախվում է բոլոր դեղագործական մագազիններում և դեղատներում։
Գլխաւոր պահեստ ամբողջ Ռուսաստանի համար։ Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ ՄՕՍԿՎԱ։ ԱՅՈՒՄ։ Դէպօ ԹԻՖԼԻՍՈՒՄ. Դեղագործ. ապր. Կովկ. Ընկ. պահեստում, Ծուրինովի, Պոպովի և Աղմուրովի դեղատներում և Արիստակովի մօտ։ (№ 126) 10—12

ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ ԵՒ ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆԻՑ
ՍԱՊՕՆ
պրոֆիլաքտիկ
Ա. Մ. ՕՍՏՐՕՈՒՄՕՎԻ
Կատարելապէս ոչնչացնում է գբլուխի թեփը, նպաստում է մազերի կանոնաւոր աճմանը և իսկապէս դադարեցնում է նրանց թափվելը։
Իւրաքանչիւր կտորի գինը 30 կոպ.։ Երկու կտորանոցի գինը 50 կոպ։
Կեղծումներից խուսափելու համար պահանջեցէք իսկական սապոն, որը արկղի վրա կառավարութիւնից հաստատված մարկա ունի № 3374.
Ծախվում է ամեն տեղ։ Պահեստ, Մոսկվա, Լեալին փող. սեփական տուն։
(№ 23) (2.) 15—20

„Ольфакторіумъ Нудилинъ“
М. Л. ЖИРМУНСКАГО.

ՄԻԱՅՈՑ **ԽԱՐԲՈՒԽԻ** ԴԷՄ
բժշկական դեպարտամենտից թոյլատրված
ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
Ծախվում է 40 կոպէկով
Դեղագոլ ծական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում։
№ 128 (91 թ.) 28—40

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մորթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է կուկիայում, Վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։
(№ 67) 89—100 (ե. 2.)

Позволено цензурою, Тифлисъ, 22 Іюля 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кав.